

ՏԵՍՈՂՈՒԹՅԻՒՆԸ ԵՒ ԻՐ ՀԻՒԱՆ Դ ՈՒԹՅԻՒՆՆԵՐԸ

Երրորդ տեսակի աչքերու գունդը ետեւի կողմէն սեղմուած է և լոյսի ճառագայթները մտնելով աչքի մէջ կը բեկուին և չեն կեդրունանար ցանցենիին վրայ, այլ դէպի դուրս և ետ. ցանցենիին վրայ առարկայի պատկերը կը կազմուի աղօտ: Որպէսզի պատկերը պարզ եւ յստակ դառնայ, մենք կը տեղաւորենք աչքի առաջ ոսպաձեւ (converges) կոչուած ապակի: Այդ ապակին օգնութեան կուգայ եղջիւրային թաղանթին և ոսպին (cristallin, սառնենի), ուժեղ կերպով կը բեկանէ լոյսի ճառագայթները և կը նպաստէ անոնց կեդրոնանալուն ճիշդ ցանցենիին վրայ:

Այդ տեսակ աչքը, հեռու եղած առարկաները սովորաբար պարզ կը տեսնէ առանց դժուարութեան, իսկ մօտը գտնուող իրերը տեսնելու համար ստիպուած է միշտ կծկուած պահել թարթիչային դընդերը, որ ոսպի հետ կապ ունի և կը սեղմէ ոսպը, որպէսզի ան աւելի ուժեղ կերպով բեկանէ ճառագայթները: Այդ տեսակ աչքերը սովորաբար փոքր կ'ըլլան, շատ անգամ շիշ դէպի ներսը և կը կոչուին իշտատես (hypermetropie) աչքեր:

Այդ տեսակ աչքեր ունին կենդանիներու մեծ մասը, սողունները, ճճիները, նոյնը ունեցած է նաև նախնական մարդը և ներկայիս՝ վայրենիները որոնք մեծ պէտք ունին հեռուէն տեսնելու թշնամին՝ ինքնապատպանութեան համար, և գրել ու կարդալ չեն գիտեր:

Հեռատեսութեան թեթեւ աստիճաններու պարագային պէտք է գործածել ակնոցներ մօտէն պարզ տեսնելու համար: Միջակ և բարձր աստիճաններու հեռատեսութեան դէմ պէտք է գործածել ակնոցներ թէ հեռուի և թէ մօտի համար:

Աչքի եղջիւրային թաղանթին և ոսպին մակերեւոյթը կրնայ ըլլալ ոչ հաւասար և բաւարար չափով գնդածեւ, այլ շեղուելով մէկ կամ միւս կողմը մօտենալ գլանածեւի (cylindrique) կամ ունենալ այնքան բարդ մակերեւոյթ որ գլանածեւի ու գնդածեւի տարրեր աստիճաններու խառնուրդ ըլլայ:

Այս ձեւերը կրնան ըլլալ բնածին, կամ առաջանալ աարբեր հիւանդութիւններու հետեւանքով: Այս տեսակ աչքեր ունեցողները թէ մօտէն և թէ հեռուէն աղօտ կը տեսնեն առարկաններու որոշ մասերը, իսկ մնացած մասերը՝ պարզ և յստակ:

Զգտելով աւելի յստակ տեսնել՝ այդ տեսակ աչքեր ունեցողները

կը յարեն աչքի պառուզի գնդերները, առարկան կը մօտեցնեն աչքին,
կը կծկեն բնականնեն աւելի և եթէ այդպէս երկար աւելէ ցաւը կը
զգան թէ՝ աչքի պառուզին և թէ նակատին մէջ:

Թարթիչային գնդերը եւս, ուզելով յարմարուիլ այդ աեսակ
զրութեան, յստակ աեսողութիւն յառաջ բերելու նպատակով մերթ
շատ կը սեղմէ սապը, մերթ թուուիկ կը պահէ, սակայն չի կրնար նը-
պատակին հասնիր, որով իր այդ յարմարուելու կարողութիւնը կը
խանդարուի, կ'առաջանայ ջղաձղում մը (spasme d'accotmodation) որ
ցաւեր կը պատճառէ զյուուն և աչքի պառուզին մէջ, մանաւանդ զրե-
լու, կարգալու, կարելու և այլ նուրբ տեսողութիւնն պահանջող աշ-
խատանքներու ատեն:

Այդ տեսակ աչքերը մեծ կարիք ունին ապակիներու օգնութեան,
Ապակիներու ճիշդ ձեւը, չտիր որոշելու համար մասնագէտ ակնարոյ-
ժը շատ մեծ խնամքով, համբերութեամբ և մանրամասնորէն կը քըն-
նէ հիւանդ աչքերը:

Երբ մարդ որոշ տարիքի հասնի, մօտ 40 - 45 տարեկան, անոր
աչքին սապը կը սկսի կորսնցնել իր ձկունութիւնը, աեսողութիւնը
կը խանդարուի, թարթիչ գնդերի ներգործութիւնը սապին վրայ՝ կը
թուլնայ, որով մօտիկ առարկաները պարզ աեսնելու համար՝ աչքին
յարմարուելու բնգունակութիւնը կը նուազի: Տեսողութեան այս
խանդարումը կը կոչուի պրեսբիլի (presbytie):

Այս տեսակ պարագաներու մէջ, մարզը կարիք ունի ապակինե-
րու օգնութեան: Ակնարոյժը քննելով անոր աչքերը, կը նշանակէ
տարրեր տասիճանի սապաձեւ և այլ ակնոցներ, համաձայն աչքերու
ձևին և տեսողութեան խանդարումի տեսակին:

Տեսողութեան հիւանդութիւններու կամ խանդարումներու մա-
սին այս համալուս ուսումնասիրութենէն կարելի է գասալ թէ որքան
օգտակար կրնայ րլլալ, շատ մը պարագաներու մէջ, մասնագէտ բը-
ժիշկի մը կողմէ տեսողութեան պարբերական քննութիւնը և համա-
պատասխան ակնոցներու գործածութիւնը, թէ՛ մանուկներուն և թէ
չափահաններուն համար:

(Վերջ)

Բժ. Յ. Տէր ԴԱԼԻԹԵԱՆ

ԸՆԹԵՐՑՈՂ

ԴՍԻՆ ՈՐ ԿԸ ՍԻՐԵՍ «ԲՈՒԺԱՆՔ»ը, կը կարգաս և կ'օգտուիս,

ԶԵ՞Ս ՈՒԶԵՐ ՃԻԴ ՄԸ ԸՆԵԼ, տարածելու համար քու թերթգ,
բաժանորդագրելով ծանօթներդ, որպէսզի որիշներն ալ կարդան,
սիրեն և օգտուին «ԲՈՒԺԱՆՔ»էն և զարգացնեն զայն: